մօտս նստած մի պառաւ անգլուհու, որ երկար ապրել էր Ճապոնում, ինչպէս ինքն էր ասում: Նա արհամարհոտ մի հայեացք գցեց գերմանացու երեսին. բայց միայն ուսերը թափ տուաւ եւ ոչինչ չը պատասխանեց:

—Սրանց նմաններին ի՞նչու համար պիտի սիրի ճապոնացին,— բացականչեց նա՝ չարացած ինձ դառնալով: — Մի՞թէ կարելի է աւելի անկեղծ վերաբերմունք ցոյց տալ եւրոպացուն, երբ տեսնում ես, որ նա միայն խլել ու տիրել է ցանկանում. եւ ճապոնացին շատ լաւ է հասկացել եւ հիանալի պաշտպանւում է, իսկ այս պարոններն էլ ի հարկէ չարանում են: Ախ, որքան կը կամենային իրանց թաթը դնել այս կապոյտ ծովի վրա էլ, դնել իրանց թաթը այս ջօնկերի ու այս խաղաղ ձկնորսների վրա:

Եւ նա վրդովմունքից աչքերը փակեց մի վայրկեան: Յետոյ բացաւ ու շարունակեց աւելի ջերմ.

—Հաւատացէք, օրիորդ, ճապոնացիք հրաշալի ժողովուրդ են. երբ նրանք զգում են ձեր վերաբերմունքի անշահասէր ու անկեղծ լինելը, նրանցից աւելի սիրալիր ու սրտակից մարդ չէք կարող գտնել աշխարհումս:

Նագասակիից մինչեւ Կօբէ միայն մի կայան կայ, Սիմոնօսէկի, որ յայտնի է պատմութեանը 1895-ի Չին-Ճապոնական դաշինքովը:

Քաղաքը զետեղւած է նոյնանուն նեղուցի վրա, որ բաժանում է Նիպպոնի կղզին Կիու-Սիուից, Ճապոնի ծովը կապում է գեղանկար Միջերկրական ծովի հետ:

Սիմօնօսէկիում շոգենաւը մի երկու ժամ է կանգնում